

Մինչև 19-րդ դարի վերջը ու լատակայընը հետ կապվում էին հա-  
վատակերացումների որոշակի դրսւորումներ, որոնց  
կարևոր դեր ունեին ժողովրդի կրօնական մտածողության ընդհանուր  
համակարգում :

Վերջին երկու տասնամյակի ընթացքում մեր հավաքած դաշտային  
նյութերի հիմամբ կարելի է անել հետևություն, որ սկսած 20-րդ  
դասկարգից ուխտագնացության ինստիտուտն արդեն ենթարկվում էր  
փոփոխությունների և աստիճանաբար կորցնում նախկին դերն ու  
նշանակությունը կենցաղում :

Այսօրքա կենցաղում պահպանվել են ուխտագնացության ինստի-  
տուտի այն կողմերը, որոնք կապված են եղել ժողովրդական զանգվա-  
ծային զվարյությունների և տոնակատարությունների հետ: Դա հաս-  
կանալի է դառնում, եթե նկատի առնվի, որ հայերի կենցաղում միշտ  
էլ ուխտագնացությունը համընկնում էր ժողովրդական տոնացու յցի  
գարնանա-ամառնա յին շրջանին:

#### Ա. Վ. ՍԵՂԲՈՍՅԱՆ

ՆՈՐՍՅՆԱՑՊԱԽՆԵՐԸ ՖԱՎԱՔԻ ՀԱՅԵՐԻ ՄՐԴԻ ԿԵՆՑԱՂԱԽՄ  
ՈՐՊԵՍ ԷԹԽՈ-ՄՇԱԿՈՒԹԱՑԻՒ ՓՈԽԱՁՐԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ա Ր Գ Ա Ս Ի Ք

1. Զավախքը Վրացական ՍՍՀ քաջմազգ պատմա-ազգագրական շրջան-  
ներից է: Այստեղ քնակվում են հայեր, Վրացիներ, ոռւսներ, հույներ,  
հրեաներ և ուրիշներ: Սրանց մեջ գերակշռում են հայերը, որոնք  
այստեղ հաստատվել են հիմնականում 1828-1829 թթ. ոռւս-թուրքական  
պատերազմից հետո: Շրջանի մյուս առանձնահատկություններից մեկն էլ  
այն է, որ թվարկված ազգերի մեջ կան քաջմազգն ազգագրական խմբեր,  
որպիսի երւու յթը խորը կնիք է դրել էթնիկական և ազգագրական պրո-  
ցեսների և էթնո-մշակութային փոխադրեցությունների ընույթի վրա:

2. Զավախքի քաջմազգությունը և սոցիալ-տնտեսական պարփակ-  
վածությունը առաջին տասնամյակներում զգալիորեն արգելակում էր  
տնտեսա-մշակութային և այլ կարգի փոխարարերությունների հաստատ-  
մանը: Սակայն շրջանի ընտ-կլիմայական, տնտեսական պայմանների քաջ-  
մազանությունը, որ նպաստում էր ապրանքագործությանը, 19-րդ  
դարի երրորդ քառորդում կապիտալիստական հարացերությունների ներ-

թափանցումը Ձավախցի Թնտեսական կյանքը, գյուղի և քաղաքի մերձեց-  
ման խորացումը և հասկապես քնակչության սոցիալ-քաղաքական կյան-  
քում ընթացող երկու յթներն առաջացրին քնակչության տեղաշարժեր  
և միկրոմիգրացիաներ, որոնք հանգեցրին տարեր ազգերի ու ազգագրա-  
կան խմբերի էթնո-մշակութային փոխազեցությունների ինտենսիվաց-  
մանը։ Այս ամենը նպաստեց ամբողջ շրջանի կենցաղի և մշակույթի մաջ  
որոշակի ընդհանուրությունների ձևավորմանը։

3. Այս երկու յթների շնորհիվ Ձավախցի հայերի ինչպես Թնտե-  
սական և հասարակական կենցաղում, այնպես էլ նյութական և հոգևոր  
մշակույթի մեջ տեղի էին ունենում նորայնացումներ, մի պրոցես,  
որ մեր օրերում ավելի ինտենսիվ է ընթանում։ Այդ պրոցեսը ցայ-  
տուն կերպով արտահայտվում է քնակարանի տիպի, պբանավորման, կա-  
հավորման, սննդի, փոխադրամի ջոցների, Թնտեսական կյանքի կազմակերպ-  
ման մեջ, հարսանեկան և թաղման արարողություններում և սովորույթ-  
ներում, ազգամիջյան ամուսնություններում, փոխարարերություննե-  
րի մերրում, ժողովրդական գիտելիքների կիրարկման ոլորտում և այլն։  
Այդ պրոցեսի ինտենսիվացումը այսօր ըացարկում է էթնո-մշակութա-  
յին փոխազեցությունների առավել խորացմամբ, սեզոնային և մոնթնակա-  
յին միջրացիաների ընդլայնմամբ, ինչպես և Ձավախցի արդյունաքերա-  
կան պատենցիալի մեծացմամբ։

### Լ.Ն.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԽՆԱՎԱՐԴԱՐԱՄԻՋՈՅՑՆԵՐԻ  
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՀԱԼԻՔՏԱԿԱՆ ԶՈՒԳԱՀԵՇՈՅՆԵՐԸ

1. Պատմա-ազգագրական և հատկապես ազգագրական դաշտային նյու-  
թերը հավաստում են, որ ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ կովկաս-  
յան և մերձավարելի յան ժողովուրդների անտեսական կենցաղում, մա-  
ղավոր երկանիկ սայլերին զուգընթաց, 20-րդ դ. սկզբներին տարածված  
էր նաև զանգվածեղ /միակտուր/ անիվներով երկանիկ հազու յն սայլը։  
Մրա կառուցվածքային առանձնահատկությունն այն էր, որ անիվները  
խուլ կերպով առուցված էին իրենց առանցքի շուրջը պտղող տոնու  
քառանկյուն ծայրերին։